ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 31 հուլիսի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Դիլանյանի
Մասնակցությամբ դատավորներ՝ Ա. Թունյանի
Վ. Գրիգորյանի

Քննության առնելով Հովհաննես Ավագյանի անհատական
դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Հովհաննես Ավագյանը դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2020 թվականի հունիսի 10-ին)՝ խնդրելով.

«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում տեղ գտած «արդարադատության բուն էություն» եզրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

Հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի դատական կազմի նախագահողի միջնորդությունը՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու նպատակով սույն դիմումի նախնական ուսումնասիրման ժամկետը երկարաձգվել է մինչև 2020 թ. հուլիսի 31-ը:

2. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերի համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը դատական սխալները բաժանել է երկու խմբի՝ 1) դատական սխալներ, որոնք չեն խաթարում արդարադատության բուն էությունը, և 2) դատական սխալներ, որոնք խաթարում են արդարադատության բուն էությունը:

Դիմողի կարծիքով՝ օրենսդիրը, կատարելով դատական սխալի նման բաշխումներ, չի սահմանել այն սկզբունքները, որոնք հնարավորություն կտան եզրահանգում կատարել, որ այս կամ այն դատական սխալը խաթարում է արդարադատության բուն էությունը: Ավելին, օրենսդիրը չի բացահայտել «արդարադատության բուն էություն» եզրույթի բովանդակությունը: Ընդ որում, տվյալ եզրույթի բովանդակությունը բացահայտված չէ նաև դատական պրակտիկայում:

Դիմողը նշում է, որ նման դեպքերում Վճռաբեկ դատարան բողոք ներկայացնող անձի համար հստակ չէ վիճահարույց նորմերի կարգավորումը երկու տեսանկյունից. բողոք բերող անձի համար հստակ չէ, թե ի՛նչ սկզբունքներ են դրված դատական սխալների տարանջատման հիմքում, և բողոք բերող անձի համար հստակ չէ «արդարադատության բուն էություն» եզրույթի տրամաբանությունը:

Դիմողի կարծիքով՝ նման անորոշության պայմաններում Վճռաբեկ դատարանն օժտված է անսահմանափակ հայեցողական լիազորությամբ՝ իր հայեցողությամբ որոշել բողոքը ենթակա է վարույթ ընդունման, թե՝ ոչ:

3. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է ընդունման մասամբ հետևյալ պատճառաբանություններով.

3.1. Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը չի կիրառվել դիմողի նկատմամբ:

Սահմանադրական դատարանում դատական պաշտպանության իրավունքն անձն իրացնում է Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված կարգով՝ ելնելով նաև Սահմանադրական դատարանում գործերի քննության և լուծման առանձնահատկություններից: Միաժամանակ, դատական (այդ թվում՝ սահմանադրական-դատական) պաշտպանության իրավունքը, ինչպես նաև դրա իրացման՝ օրենքով նախատեսված ընթացակարգային կանոնները, ինքնանպատակ չեն և հայեցողաբար մեկնաբանվել չեն կարող, քանզի դրանց իրացումը ենթադրում է կոնկրետ իրավական (Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված) գործընթացներ, ինչը պայմանավորված է դրանց մասնակից սուբյեկտների փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: Հետևաբար, դիմողը մինչև Սահմանադրական դատարան դիմելը պարտավորված է պահպանել այն պահանջները, որոնք նախատեսված են Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով:

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում

ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը, հենվելով վերոնշյալ սահմանադրական նորմի վրա, սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան, մասնավորապես, դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) **երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը**, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ հիմքի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը Սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

3.2. Դիմողի կողմից վիճարկվող՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի առնչությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ առկա չեն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ և 69-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը, մասնավորապես՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են Սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ Սահմանադրական դատարանի որոշում,

- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում չի իրականացվում գործի դատաքննություն,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները և պահպանել Սահմանադրական դատարան դիմելու համար նախատեսված վեցամսյա ժամկետը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 1-րդ կետով՝ Սահմանադրական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Հովհաննես Ավագյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Հովհաննես Ավագյանի անհատական դիմումով գործի քննությունը՝ «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի մասով, մերժել:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Դատավորներ՝

31 հուլիսի 2020 թվականի
ՍԴԴԿՈ-40